

Թէ ճշմարիտ Աստուծոյ երկրպագութիւնը, Պ. Գնունին չէ կարողացել հարկաւոր տեղերում դիմորոշ յօդերը գործ անել, ես յատուկ Պ. Գնունու գրքի ամենապարզ կտորը օրինակ բերեցի, որ չ'ասի Թէ բժախնդրութեամբ աշխատել եմ անկանոն գրուածը (որոնցով լի է գիրքը) օրինակ բերել, Հրէայք նոր օրէնքը չընդունելով, հինը բնաւ ուրացած չ'են, Եթէ Արրահամից սկսած մինչև Յիսուս Քրիստոս ճշմարիտ կրօնի հետեւող Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ էին համարվում, իրանք իրանց դարձեալ այժմ ևս ընդէն ժողովուրդ են համարում, ինչպէս և ամեն ազգ իրան ընդէն ժողովուրդ է համարում, Զուր բան է որ նոքա Յիսուս Քրիստոսին չեն համարում խոստացեալ Մեռելիք, Իսկ աղանդների՝ նոքա արգէն Քրիստոսից շատ առաջ բաժանուած էին. ինչպէս ինքն Պ. Գնունին էլ խոստովանումէ ծանօթութեան մէջ, Յիսուս Քրիստոս պատուիրեց իւր աշակերտներին զգոյշ լինել սաղակեցիների և փարիսեցիների խմորից, Դասագրքի մէջ պէտքէ առաջ բերած պարագաները փաստերով մեկնաբանել և պարզել, Պ. Գնունին բրահմականութեան բուդդականութեան և կոնֆուկիոսի աղանդների վերայ բարեհաճել է հատ կտոր տեղեկութիւններ տալ, իսկ Հրէաների երկք կրօնական հերձուածի բաժանուած լինելը աշակերտներին ուսուցանելով և իւրաքանչիւր հերձուածի անունը տալով (Խալմուտական, Գարայիմ և Հոնքերեան) զլանումէ նոցա սկզբունքի հետ ծանօթացնել աշակերտներին, Պ. Գնունի, աշակերտները, այդ երեք հերձուածների ինչութիւնը իմանալու համար ո՞ր գրքին դիմեն, Եթէ աղանդների ինչութեան մասին տեղեկութիւն տալը աւելորդ էք համարել, ինչո՞ւ էք անունները տուել, Դուք որ չէք բացատրել, գոնէ յայտնէիք Թէ ո՞ր գրքին դիմելու է բաւականութիւն ստանալու համար:

(Մեռելիք հեռեւէլ համարում,)

ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ.

ՄԵՐ ՎԵՋԱՓԱՌ ՀՈՐ

ԳԷՈՐԳ Դ-Ի ՀԻՐՄԻՆ.

ցուխտենոզան յիշատակն արդարոց
օրնունիւմար եղիցի:

Շատ ժամանակ չի անցել այն թշուառ օրից, որ մենք Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի աշակերտներս և ուսանողներս դժբաղդութիւն ունեցանք երկար ժամանակ սուգ պահել և ողբալ մի մահ, մի մեծ մարդու մահ, մեր խոցը խոր էր, վիշտը մեծ, կսկիծն ու ցաւը անտանելի. որովհետեւ այդ մահով Հայոց ազգը զրկուեցաւ իւր ուսումնասէր

Հայրապետից և ուսումնարանների ամենաջերմ և մեծ Պաշտպանից՝ Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը իւր արի և քաջ Հովուապետից՝ իսկ մենք մեր սիրելի Հօրից—մեր Հոգեւոր Ծնողից՝ ո՞վ էր այդ անձնաւորութիւնը, որի մահով ամբողջ Հայ ազգը ի սուգ համակեցաւ։ Դա մեզ ամենքիս քաջ ծանօթ ամենայն Հայոց Հայրապետ Գեորգ Դ. ն էր, որի ձեռաշէն ճեմարանի սաներից Դս այսօր աւարտելով ճեմարանական դասընթացը, եկել ենք միանգամ ևս, գուցէ վերջին, մեր երախտագիտական զգացմունքը յայտնելու Նորան, Նորա անշուք, բայց Ս. գերեզմանին։

Մեր սիրտն այժմ կսկծում և մորմոքում է, երբ մտածում ենք, որ մեր Հոգեւոր Հայրը բազմաթիւ նեղութեանց դիմանալով աշխատասէր և ժրջան երկրագործի պէս մի մտաւոր և բարոյական պարտեզ շինեց, բայց չ'կարողացաւ ճաշակել և վայելել իւր այգու պտուղը, Եթէ մեր Հոգեւոր Հայրը դժբաղդ գտնուեցաւ մեզ այսօր հասած չ'տեսնելու, մեք ևս եղբայրներ, ո՛չ պակաս անբաղդ ենք, որ մեր կեանքի այս հանգիսաւոր վայրկեանիս զրկուած ենք Նորա տեսութիւնից, որի կենդանութիւնը մեզ այսօր առաւել բաղդաւոր կաներ։ և որ վերջապէս զրկուելով Նորա հայրական վերջին Ս. օրհնութիւնից, այժմ եկել ենք Նորա սառը շիրմին յայտնելու մեր սրտի խոր և ամենաջերմ երախտագիտութիւնը, և ստանալու Նորա օրհնութիւնը. ես այժմ աւամայ վերանումեմ զէպի մեր պատմութեան հին դարերը և միտքս եմ բերում մի զուգահիշական նմանութիւն մեր վիճակի հետ։

Հատ դարեր առաջ դեռ Բիւզանդիոնից Նոր վերադարձած մի ուսումնաւարտ հայ երիտասարդ իւր հայրենիքի թշուառութեանց հետ և իւր բաղդն էր ողբում « յուսայաք հարսանեաց պարել՝ անվեհեր երա-
գութեամբ կրթեալք, և առագաստի ասել երգս, — քիւնէն էլ երգէն —
« Եւն է վերայ քիւնէնէն — դէ — առնէլ — զարեւել հաւաքէս, — քիւն էլ պէտք է ինչ-
« Ժամէն — զայն — իսկ — ցանց, և լսել զվերջին քաղաքս և շքանքն »։

Եթէ Մ. Խորենացին հայրենիքից հաղարաւոր մղոններ հեռու գտնուելու պատճառով չ'կարողացաւ արժանանալ իւր Հոգեւոր ծնողների վերջին բարբառը և օրհնութիւնը լսել, դեռ Նորա վիշտը տանելի էր իսկ մերժ մենք որ մի քայլ հեռու գտնուելով դարձեալ զրկուեցանք այդ միութարութիւնից, որքան առաւել ուրեմն՝ մենք պէտքէ կրկնենք սորա հետ թէ. « Զմտաւ զայսօսիկ ածելով հառաչումս յիս ի ներքս ընթանայ և արօսսր, և կամեցուցանէ բարբառել բան տխրական և սգաւոր, Եւ ոչ գիտեմ եթէ զիարդ յարմարեցից զողբերգութիւնս, և կամ զո՞վ արտասուեցից . . . շուրջ էմ Լուսնաւառութեամբ . . . Եթէ դէն է հոգեւոր Թագաւոր Ժողովուրդս Եւնէից և ցաւեւել . . . բայց իհարկէ առաւել ողբալին մենք ենք, որովհետեւ մենք սպասումէինք Նորանից մի հայրական և սիրալիւր առաջնորդութիւն, մեր թոյլ դժերին զօրութիւն տուող, խրախուսող և քաջալերող. մի օգնական ձայն, որ յորդորէր մեզ կեան-

քի մրկայոյդ և փոթորկալից ալիքների դէմ մրցելու և պատառելու։
 Բայց արդ՝ Ո՞ր է քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս և ահա-
 ւորութիւն առ թիւրս, ո՞ր շէտշէտ շրթերէն ժպտանա՞ն Բ՝նի ոչնչեղոյց
 Կ՝նի խնդամիտ սիրտն ընդունող արքանեկաց, ո՞ր երկայն
 ճանապարհաց յոյս, հեշտացուցիչ աշխատութեանց հանգուցող՝ մեր
 յոյս և ապաւէնը, մեր միտթարութիւնը ի չիք դարձաւ, « Կորեաւ ժո-
 Ղովորդն, թագեաւ նաւահանգիստն, ելիք օգնականն, լոեաց ձայնն
 յորդորեցուցիչ » :

Որքան և մենք այս վայրկեանիս Մ. Խորենացու հետ համաբաղդ լի-
 նելու փառքն ու դժբաղդութիւնն ունենանք, բայց և այնպէս մենք մի
 ուրիշ կողմով Խորենացուց աւելի բաղդաւոր ենք այսօր. ես համոզուած
 եմ որ՝ ոչ ոք մեզանից իրաւունք չպէտքէ ունենայ Խորենացու հետ
 կրկնելու այս խօսքերը, թէ « Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զու-
 սումն, ո՞վ ուրախասցի ընդառաջագիմութիւն աշակերտիս . . . » քանի
 որ մեր ազգը իւր բոլոր դասակարգերով, մեծ մասամբ մեր հոգեւոր ծնո-
 ղի քանքերի շնորհքով՝ այս օր շատ յարգ ու պատիւ է տալիս յատ-
 կապէս ուսումն ու գիտութիւն ունեցողներին. վերջապէս մենք բոլորս
 մինչև անգամ քաջ համոզուած ենք որ՝ ինչպէս այժմ ամբողջ Ս. Էջ-
 միածնի միաբանութիւնը իւր սրբազան Տեղակալով, այնպէս էլ Հայ
 ազգը և մեր նորընտրելի Հովուապետ և հոգեհայրը առաւել սէր կ'ցոյց
 տան դէպի մեզ, ինչպէս շատ անգամ ցոյց են տուել, ոչ այնքան մեր
 արժանաւորութեանց պատճառով և չափով, որքան իբրեւ երախայրիք
 և յատկապէս երախայրիք մի այնպիսի հաստատութեան՝ որ մեզ ամեն-
 քին հաւասարապէս սիրելի էօրից է հիմնուած :

Այսօր այս գերեզմանի մօտ կանգնած՝ մարդս ակամայ մտածումէ,
 թէ ի՞նչ է աշխարհը, ի՞նչ է նորա նպատակը, ինչո՞ւ են մարդիկ ծըն-
 ւում, ապրում և մեռնում. թող այդ փիլիսոփաները և աստուածա-
 բանները բացատրեն, ինչպէս որ գիտեն. մենք միայն այս կասենք, որ
 աշխարհս մարդու վերաբերութեամբ մի կրկէս, մի նսպարէզ է, ուր
 մարդս հարցաքննումէ աշխարհի առաջ և երևում իւր իսկական յա-
 տուկ գոյներով և արժանաւորութիւններով, փայլումէ իւր ազնիւ գոր-
 ծերով և նսեմանում իւր չար գործերով. մի խօսքով այդ մի քուրայ է,
 ուր երևումէ թէ մարդս որքան արժանի է մարդ կոչուելու, թէ որքան
 նա խօսքով, վարքով և գործով աշխատել է յօգուտ ընկերին, որի
 մէջ ահա փայլումէ մարդուս մարդկային և աստուածային արժանաւո-
 րութիւնները :

Մեր հանգուցեալ հոգեւոր Ծնողի համար ամենայն վստահութեամբ և
 համարձակութեամբ կարող ենք ասել, որ նա իւր կեանքի ընթացքում
 միշտ գործել է յօգուտ իւրեան յանձնուած հօտին, թէ իւր առաջնոր-
 դութեան, թէ պատրիարքութեան և թէ Հայրապետութեան ժամանակ
 այս ասելու ժամանակ մենք չենք կարող մոռանալ, որ մարդը մահկա-

նացու է և մահանացուն սխալուիլը յատուկ է. տեսէք, պայծառ արեգակը ինչպէս իւր ճառագայթներով լոյս է սփռում բոլոր տիեզերքին, բայց ո՞վ կարող է ուրանալ որ նա ևս սև բծեր չունի. բաւական է մեզ այստեղ յիշել մեր հոգեհոգի Հայրապետութեան ժամանակի գործունէութիւնը և ազգին մատուցած անգնահատելի բարիքներն ու ծառայութիւնները. Չայնագրութիւնը, ուսումնարանական Խնդիրը և ինչ և վերջապէս Ճեմարանը, որ իւր գործերի թագն ու պսակն է. կարելի է ասել որ Գէորգ Գ. ի ժամանակը Հայ պատմութեան մէջ մի նոր դարագլուխ և մի բոլորովին նոր շրջան է. մի խոր մտածեցէք այդ հոյակապ խաչածե Ճեմարանի ապագայում ազգին մատուցանելի ծառայութեանց վերայ, մտածեցէք, որ այդ տեղ Թեհրանից և Մոլդաւեայից, Ասորախանից և Եգիպտոսից, Հայաստանի և այլ հայաբնակ քաղաքներից եկող մանուկները 9—12 տարուայ չափ կրթութեան միենոյն յարկի տակ, միենոյն ուղղութեամբ և միենոյն հոգեով. համարձակութեամբ ասելու, եթէ մեր հոգեւոր Հայր Գէորգ Գ. -ը ուրիշ ոչինչ արած չլինէր, Գէորգեան Ճեմարանը բաւական էր նորա Անունը անմահացնելու:

Դժուար է հասկանալ Հայր, այսուհետեւ անմոռաց կմնաս բոլոր Հայերի և մանաւանդ մեր սրտերի մէջ, որովհետեւ «Դու քեզ յիշատակ հրաշալի և յաւերժական արձան կանգնեցիր, աւելի կարծր քան զմետաղները և բարձր քան զփարաւօնեան բուրգերը. փոթորիկն ու մրրիկը կ'դժուարանան նորան փշրելու, և ամեն ինչ մաշող և ձախող ժամանակի հոսանքը չպիտի կարողանայ կործանել նորան»), Բո անմահ գործերը դարէ ի դար կ'յիշուին, քանի որ աշխարհիս երեսին կլինի Հայ անունը. Բո արժանաւոր փառքը ապագայում իսթան կդառնայ և ուրիշներին, և որորանում հազիւ թոթովող մանուկի ականջին քո անունը կհնչուի. Ո՞վ հոգեւոր Հայր, Դու մեծ ես, Դու անմահ կմնաս:

Ի ԴԻՄԻՏՐԻՍ ԿԱՆԿԱՆԻՍՏԱՆՔԻ

ՍՏԵՓԸՆ ԿԱՆԿԱՆԻՍՏԱՆՔ.

2 ՅԱՆՎԱՐ 1885 Վ.

Ընթերցողաց ուշադրութիւնը հրաւիրում ենք սոյն ազգու եւ գեղեցիկ ճառի վերայ, որ կարգացուեց հանգուցեալ Վահ. Գէորգ Գ. Կաթողիկոսի շիրմի վերայ ի դիմաց աւարտող աշակերտաց ճեմարանի ի ժամ հոգեհոգեւորան:

(*) Հորացիոսի. Գերթալինի եւ Պուշկինի խօսքերի յամալուծեալն: